

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

### 1.1.1. 2003թ. հունվար-օգոստոսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2003թ. հունվար-օգոստոսին կազմել է 823973.2 մլն. դրամ, իսկ աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 114.8% (2002թ. հունվար-օգոստոսի 109.8% ցուցանիշի դիմաց):

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում հիմնականում պայմանավորված է տնտեսության 5 բազային ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, այդ ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 117.7% աճ՝ 2002թ. հունվար-օգոստոսի 110.4%-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում 5 բազային ճյուղերի տեսակարար կշիռը 2002թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ ավելացել է 2.0 տոկոսային կետով:

Ընդ որում, արձանագրվել է տեսակարար կշռի աճ շինարարության ճյուղում՝ 3.5 տոկոսային կետով և արդյունաբերության ճյուղում՝ 1.4:

### ՀՆԱ-ի արտադրությունն ըստ տնտեսության հիմնական բազային ճյուղերի

(%-ով)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելածին		ՀՆԱ-ի կառուցվածքն ընդամենի նկատմամբ	
	հունվար-օգոստոս		հունվար- օգոստոս		հունվար- օգոստոս	
	2002	2003	2002	2003	2002	2003
<b>ՀՆԱ-ն հիմնական գներով</b>	<b>109.4</b>	<b>115.4</b>	<b>8.3</b>	<b>13.7</b>	<b>88.6</b>	<b>89.1</b>
որից՝						
արդյունաբերություն	109.7	119.2	2.3	4.7	24.2	25.6
գյուղատնտեսություն	101.2	100.1	0.3	0.0	21.1	18.4
շինարարություն	136.4	155.6	3.1	6.0	10.8	14.3
տրանսպորտ և կապ	103.3	110.4	0.2	0.5	4.9	4.8
առևտուր և հանրային սնունդ	114.8	113.6	1.4	1.3	9.6	9.5
Ընդամենը, բազային ճյուղեր	110.4	117.7	7.3	12.5	70.6	72.6
Ապրանքների և ներմուծման գուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	113.4	110.0	1.5	1.1	11.4	10.9
<b>ՀՆԱ-ն շուկայական գներով</b>	<b>109.8</b>	<b>114.8</b>	<b>9.8</b>	<b>14.8</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>